ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ
ԿԱՌԱՎԱՐԻՉ
ԱԼԲԵՐՏ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
N 0028

УПРАВЛЯЮЩИЙ ПО
ДЕЛАМ
О БАНКРОТСТВЕ
АЛЬБЕРТ КАРАПЕТЯН
СВИД. КВАЛИФИКАЦИИ
N 0028
МИНИСТЕРСТВА
ЮСТИЦИИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ք. Երևան, Եկմալյան 6, 4-րդ հարկ
հեռ.՝ 041 45 99 95, 094 27 21 50, էլ. հասցե՝ albertkarapetyan013@gmail.com

ՀՀ սնանկության դատարանի
դատավոր **Ա. Բաբայանին**

Պատճենը՝
Պարտապան՝ **ԱՁ Վարդուհի Նշանի Կարապետյան**
Արմավիրի մարզ, գ. Ջրառատ, Հ. Մկրտչյան փ. 1

Պարտատեր՝ **ՀՀ պետական եկամուտների կոմիտե**
ք.Երևան, Խորենացու 7

Պարտատեր՝ **«Արդշինբանկ» ԲԲԸ**
ք.Երևան, Գ. Լուսավորչի 13

ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ
Պարտապան ԱՁ Վարդուհի Նշանի Կարապետյանի գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու և հրապարակային սակարկություններ կազմակերպելու թույլտվություն ստանալու վերաբերյալ

ՀՀ սնանկության դատարանի (այսուհետ՝ Դատարան) 03.02.2025թ. թիվ ՍԴ/0026/04/25 վճռով ԱՁ Վարդուհի Նշանի Կարապետյանը (պետական գրանցման համար՝ 99.1153172, ՀՎՀՀ՝ 49719627, հասցե՝ ՀՀ, Արմավիր, Ջրառատ, Հ. Մկրտչյան փ. 1), այսուհետ նաև՝ Պարտապան, ճանաչվել է սնանկ: Դատարանի 11.02.2025թ. որոշմամբ ես՝ Ալբերտ Կարապետյանս, նշանակվել եմ Պարտապանի սնանկության գործով կառավարիչ:

Սույն սնանկության գործով, ղեկավարվելով «Սնանկության մասին» օրենքի 75-րդ հոդվածի պահանջներով՝ հրավիրվել է պարտատերերի հերթական ժողով 23.06.2026թ., ժամը 16:00-ին, սնանկության գործով կառավարչի գործունեության հասցեում՝ ք. Երևան, Եկմալյան 6, 4-րդ հարկ:

Ժողովի օրակարգում ընդգրկված էր Պարտապանի գույքի կազմում ներառված հետևյալ անշարժ գույքի (այսուհետ՝Հողամաս) վաճառքի ծրագիրը հաստատելու մասին հարցը.

- Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Ջրառատում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամաս (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 0260192, կադաստրային ծածկագիր՝ 04-085-0254-0010):

Սույն գործով պարտատերերը՝ ՀՀ ՊԵԿ-ը և «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ԲԲԸ-ն, չեն մասնակցել ժողովին: Հետևաբար, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ ժողովն իրավասու չէր և համարվել է չկայացած:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 75-րդ հոդվածի 1.1 մասի համաձայն՝ *...Գույքի վաճառքի ծրագիրը պարտատերերի խորհրդի կամ ժողովի կողմից չհաստատվելու դեպքում կառավարիչը դիմում է դատարան՝ միջնորդելով հաստատել գույքի վաճառքի ծրագիրը՝ կցելով պարտատերերի ժողովի կամ խորհրդի որոշումները կամ ժողովի կամ խորհրդի նիստի անցկացման անհնարինության (չկայացման) հիմքերը:*

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 75 և 76 հոդվածներով՝ դատարանին

Միջնորդում եմ

1. Հաստատել ԱՁ Վարդուհի Նշանի Կարապետյանի գույքի վաճառքի ծրագիրը,
2. Թույլատրել հրապարակային սակարկություններով օտարել ԱՁ Վարդուհի Նշանի Կարապետյանի սեփականությունը հանդիսացող հետևյալ անշարժ գույքը.

- Արմավիրի մարզ, Արաքս համայնք, գ. Ջրառատում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամաս (սեփականության իրավունքի գրանցման վկայական թիվ 0260192, կադաստրային ծածկագիր՝ 04-085-0254-0010):

Հողամասի նկարագրությունը

Հողամասը գտնվում է Արմավիրի մարզի Ջրառատ գյուղում, զբաղեցնում է 1900 քմ մակերես, ունի ուղղանկյունաձև տեսք: Հողամասը ոռոգելի է, հարթ է, Հողամաս տանող ճանապարհը գրունտային է, գտնվում է միջին վիճակում:

Համաձայն «Այ Էքսպերտ» ՍՊ ընկերության 23.03.2026թ-ի գնահատման հաշվետվության՝ Հողամասի շուկայական արժեքը կազմում է 660,000 (վեց հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Հողամասի մեկնարկային գինն առաջարկելու համար հիմք է ընդունվել «Այ Էքսպերտ» ՍՊ ընկերության 23.03.2026թ-ի գնահատման հաշվետվությունը:

<u>Կից ներկայացնում եմ՝</u>

- *Սույն միջնորդությունը պարտապանին և պարտատերերին ուղարկելու մասին փոստային անդորրագրերը և գույքի վաճառքի ծրագրի մասին azdarar.am կայքում կատարված հրապարակումը,*
- *Պարտատերերի ժողովի արձանագրությունը և գույքի վաճառքի ծրագիրը,*
- *Ժողովի անցկացման վայրի և ժամանակի մասին ժողովին ներկա գտնվելու իրավունք ունեցող պարտատերերին և պարտապանին պատշաճ ծանուցելու մասին փոստային անդորրագրերը և ծանուցման պատճենը,*

- *«Այ Էքսպերտ» ՍՊ ընկերության 23.03.2026թ-ի գնահատման հաշվետվության պատճենը:*

27.07.2026թ.
Ալբերտ Կարապետյան